ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/74

«07» 02 2025 թ.

Ռուդիկ Աբրոյան Ա/Ձ
(ՀՎՀՀ 02902072)
ՀՀ, ք. Գեղարքունիք, Վարդենիկ 2-րդփ.,4տ
էլ. հասցե՝ rudik91@internet.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ և Ռուդիկ Աբրոյան Ա/Ձ-ի միջև 04.07.2024թ.-ին կնքված «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024OBDII-1» ծածկագրով պայմանագրի 06.11.2024թ.-ի թիվ 1 համաձայնագրի շրջանակներում Ռուդիկ Աբրոյան Ա/Ձ–ն Պայմանագրի թիվ 1 չափաբաժնի մասով պետք է մատակարարեր 677 հատ կարճաթև փոխակերպիչների մասեր: Սակայն 06.11.2024թ.-ի թիվ 1 համաձայնագրի շրջանակներում Պայմանագրի 4 510 320 (չորս միլիոն հինգ հարյուր տասհազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ գումարից հաստատվել է 804 000 (ութ հարյուր չորս հազար) ՀՀ դրամ գումարը: Ըստ Համաձայնագրի Ռուդիկ Աբրոյան Ա/Ձ–ն Պայմանագրի թիվ 1 չափաբաժնի մասով պետք է մատակարարեր 120 հատ «Փոխակերպիչների մասեր», որից վերջինս մատակարարել է 100 հատը, իսկ մնացած 20 հատ ապրանքը, որը պետք է մատակարարվեր մինչև 06.12.2024թ.-ի՝ 27.01.2025թ.-ի դրությամբ դեռևս չի մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով, և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

Առ 27.01.2025թ. հաշվարկվել է յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար 0.05% չափով տույժ՝ 2 144 ՀՀ դրամ և 0.5% չափով տուգանք՝ 22 551,6 ՀՀ դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և Ռուդիկ Աբրոյան Ա/Ձ-ի միջև կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՕBDII-1» ծածկագրով Պայմանագիրը՝ 1 չափաբաժնի մասով: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ռուդիկ Աբրոյան Ա/Ձ-ին տրվում է 5 օրացուցային օր սահմանված տույժը և տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար 676 548 ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման գումար 451 032 ՀՀ դրամ փոխանցել 900005000758 հաշվեհամարին: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ռուդիկ Աբրոյան Ա/Ձ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

«07» 02 2025թ.

ք.Երևան

Կատարող՝ Հ. Ասատրյան
Հեռ. 010-59-66-32